ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 99 Ա

ԼՈՐԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ԳՈՀԱՐ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ԱՆՏՈՆ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԱԼԲԵՐՏ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լորիկ Ռազմիկի Բեգլարյանի կողմից լիազորված անձ՝ Գևորգ Սարգսի Գևորգյանի 2018 թվականի սեպտեմբերի 14-ի դիմումը և ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 26 ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրանց հատկացված հողամասերից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60 րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակույթային հողերի պահպանման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմաներին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ճանաչել Լորիկ Բեգլարյանի, Գոհար Խաչատրյանի, Անտոն Բեգլարյանի, Ալբերտ Բեգլարյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-033-0088-0007 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,08722 հա մակերեսով Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 1-ին փողոց 4-րդ փակուղի թիվ 11 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրա կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Հողամասի սահմանները որոշվում են <<ՊԻՌԱՄԻԴԱ>>ՍՊԸ-ի կողմից չափագրված և Լեռնանիստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. սեպտեմբերի 24
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 100-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 50-Ն որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 50-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումները՝

1) 01.6.1.51 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) ծրագրի 4241 (մասնագիտական ծառայություն) հոդվածի <<30,0>> թիվը փոխարինել <<1,5>> թվով:

2) 01.6.1.51 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) ծրագրի 4823 (պարտադիր վճարումներ) հոդվածի <<15.0>> թիվը փոխարինել <<43,5>> թվով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. սեպտեմբերի 24
գ.Լեռնանիստ